ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/0249/02/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահող դատավոր Ա. Շիլաջյանի

2024 թվականի նոյեմբերի 19-ին քաղաք Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով թիվ ԵԴ2/0249/02/24 քաղաքացիական գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Աննարկա» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 16.01.2024 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/18» ծածկագրով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման մրցույթի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր՝ Ա. Օհանյան) 24.01.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանող «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից պահանջվել է թիվ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/18» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, որոշվել է գործի քննությունն իրականացնել դատական նիստում:

Դատարանի (դատավոր՝ Ա. Օհանյան) 28.02.2024 թվականի արձանագրային որոշմամբ գործի քննության ժամկետը երկարաձգվել է տասն օրացուցային օրով:

Դատարանի (դատավոր՝ Ա. Օհանյան) 18.03.2024 թվականի վճռով հայցը բավարարվել է, վճռվել է. « 1. <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/18 ծածկագրով <<Վանաձորի

բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման մրցույթի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել.

1.1. անվավեր ճանաչել <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/18 ծածկագրով <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման մրցույթի հրավերը:

2. <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից հօգուտ <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊԸ-ի բռնագանձել 60 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից հօգուտ <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊԸ-ի բռնագանձել 100 000.00 ՀՀ դրամ փաստաբանի վարձատրության գումարը:

4. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված: (...) »:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.08.2024 թվականի որոշմամբ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է, որոշվել է. « 1. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի անունից բերված վերաքննիչ բողոքը բավարարել: ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ2/0249/02/24 քաղաքացիական գործով 18.03.2024 թվականի վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան սույն որոշմամբ սահմանված ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում: (...) »:

Թիվ ԵԴ2/0249/02/24 քաղաքացիական գործը 13.11.2024 թվականին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանին, իսկ 14.11.2024 թվականին դատավորի աշխատակազմին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի նոր քննությունը դատարանում իրականացվում է դատարանում գործերի քննության համար սույն օրենսգրքով սահմանված կանոններով՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 414-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է գործը նոր քննության ուղարկելու մասին որոշմամբ սահմանված ծավալով:

Գործի նոր քննության ժամանակ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կիրառման ենթակա նորմերի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները պարտադիր են գործը քննող դատարանի համար, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ, 199-րդ, 200-րդ և 234.5-րդ, 414-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գործն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2024 թվականի դեկտեմբերի 30-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

2. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ**